ԹԱՄԱԴԱ.– Քո էլ կարգդ օրհնուի, տէրտէր, խօ՛սի մի, է՛:

ՆԱԶԱՐ.– Նա՛լլաթ չար սատանին: Էդ հսկաները ձեզ էդպէս նեղութիւն տա՞ն: Հապա ես ո՞ւր եմ: (Սաքոյին) Գեադա՞: Ասա ձիուս գարի տան: Էս է, վեր կենամ գնամ դրանց վերջացնեմ:

ՍԱՔՈ.– (Մի կողմ) Ասէք գարի տան,

ԲՈԼՈՐԸ.– Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:

ՎԱՐԺԱՊԵՏ.– (Վեր թռչելով) Ո՛վ հասարակութիւն, ո՛վ ժողովուրդ, ո՛վ ազգ ամենայն: Հասել է ժամանակը: Քաջակորովն Նազար, սուրբ գործի համար գնում է Հնդկաստանի ազգի վրայ, որ մեր պապերի հողը ետ խլի: Մեծ Նազարը պիտի նստի թագաւոր: Նա վեր է կացել բոլոր աշխարհքի, բոլոր ազգերի դէմ:

ՏԷՐՏԷՐ.– Մենք Քաջ Նազարի ազգն ենք, եւ դրանով, գոհութիւն աստուծոյ ամեն ազգից բարձր ենք:

ԱՌՈՅԳ ԾԵՐՈՒԿ.– Թահո՛ւ… կթողնե՞նք, որ մեր ազգի վրայ մեկ ուրիշ ազգ ծուռը մտիկ տա: Բմբուլները երկինք կհանենք, հա …

ՎԱՐԺԱՊԵՏ.– (Ընդհատելով, ոտքի է թռչում) Ոտքի՛ կանգնեցէք: Մա՛հ Հնդկաստանի թագաւորին: Կեցցէ՛ Քաջ Նազարը:

ԲՈԼՈՐԸ.– (Ոտքի են կանգնում) Կեցցէ՛ Քաջ Նազարը: Ապրե՛ս, Քաջ Նազար: (Նստում են:)

ԹԱՄԱԴԱ.– Քա՛ջ Նազար, հիմի ո՞նց ենք անում մեր հարեւան հսկաների բանը:

ՆԱԶԱՐ.– Ջնջեցի՛, գնա՛ց: Էլ հսկաներ չկան: Պատրաստուեցէք, գնում ենք:

ԹԱՄԱԴԱ.– Գնում ենք:

ԱՌՈՅԳ ԾԵՐՈՒԿ.– Ես էլ եմ գալիս:

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ.– Հլէ ես էլ եմ գալիս:

ԲՈԼՈՐԸ.– Մենք էլ ենք գալիս:

ԽՆԱՄԻ ԹԱԹՈՍ.– (Հարցական) Հը՞…

ԲՈԼՈՐԸ.– (Նրան) Խնամի Թաթոս, գնում ենք հսկաներին ջնջենք:

ԽՆԱՄԻ ԹԱԹՈՍ.– Ես էլ եմ գալիս:

ԹԱՄԱԴԱ.– (Դուդուկչիներին) Ապա մի «Քաջ Նազարի» ածէք:

ԴՈՒԴՈՒԿՉԻՆԵՐ.– (Նուագում են:)

ՎԱՐԺԱՊԵՏ.– (Նուագի հետ արտասանում է:)

Կեցցե՛ս Նազար, ապրե՛ս Նազար,
Որ ջարդում ես հազար, հազար.